ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 150-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝
Որոշում եմ.

1.ՀՀ Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության նշված թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացնել մրցույթներ:
1) ՀՀ Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի առաջին և երկրորդ կարգի մասնագետների (ծածկագիր՝3.2-7,3.3-5,3.3-6,3.3-9 և 3.3-13) մրցույթները կայանալու է ս/թ հուլիսի 21-ին՝ ժամը 10:00-ին:
2.Մրցույթների անցկացման մասին տալ հայտարարություն http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և այդ մասին երկօրյա ժամկետում տեղեկացնել Լոռու մարզպետարանի աշխատակազմին:
3.Մրցութային հանձնաժողովի լիազորված անձ նշանակել Ռուզաննա Շահվերդյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23թ. հունիսի 05
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 151-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ,ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԿԱՄ ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ՆԱՎԹԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 438-Ն որոշմամբ և Թումանյան համայնքի ավագանու 2022թ. նոյեմբերի 29-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքում 2023 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 87-Ն որոշումը և Թումանյան քաղաքի բնակիչ Մարատ Պետրոսյանի հայտը՝
Որոշում եմ.

1.Թույլատրել Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի բնակիչ, <<Ձաղիձոր գազ>> ՍՊԸ-ի տնօրեն Մարատ Պետրոսյանին՝2023թ. հունվարի 1-ից մինչև 2023թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացնելու հեղուկ վառելիքի,սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառք:
2.Հարկատուին՝համայնքապետարանի բյուջե վճարել համապատասխան տեղական տուրք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23թ. հունիսի 05
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 152-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱԾԻՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի,24-րդ կետով,38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով,հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 27-ի <<Թումանյան համայնքի 2023թ. բյուջեն հաստատելու մասին>> թիվ 98 -Ն որոշումը, Թումանյան համայնքի ավագանու 2022թ. հունվարի 18-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման իրականացման կարգը սահմանելու մասին>> թիվ 19-Ա որոշումը ,Թումանյան համայնքի ղեկավարի 2022թ. օգոստոսի 17-ի <<Թումանյան համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու համար հանձնաժողով կազմելու մասին>>թիվ 234-Ա որոշումը և Թումանյան համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծող հանձնաժողովի եզրակացությունը՝

Որոշում եմ.

Թումանյան համայնքի բյուջեի սոցիալական օգնություն խմբի այլ նպաստներ բյուջեից /հոդված 4729 /Թումանյան համայնքի նորածին երեխաների ծնողներին տրամադրել միանվագ դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23 թ. հունիսի 05
ք.Թումանյան

Հավելված
Թումանյան համայնքի ղեկավարի
2023 թվականի հունիսի 5 -ի N 152-Ա որոշման

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱԾԻՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻՆ ՄԻՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.Ըստ ստացված դիմումների՝ Թումանյան համայնքի բյուջեի սոցիալական օգնություն խմբի այլ նպաստներ բյուջեից /հոդված 4729 / Թումանյան համայնքի ներքոհիշյալ նորածին երեխաների ծնողներին տրամադրել միանվագ դրամական օգնություն.

1) Նակաշյան Զարուհի Պետրոսի - ք. Թումանյան - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ,
2) Անտոնյան Նունիկ Արկադիի - ք. Թումանյան - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ,
3) Պապինյան Տաթևիկ Սեյրանի - գ. Դսեղ - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ,
4) Հարությունյան Սոնա Էդվարդի - գ. Դսեղ - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ,
5) Կարապետյան Սերյոժա Կամոյի - գ. Լորուտ - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ,
6) Թաթոյան Աննա Անուշավանի - գ. Շամուտ - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ,
7) Սարգսյան Արտակ Հովհաննեսի - գ. Քարինջ - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ,
8) Ավագյան Արմեն Սերյոժայի - գ. Քարինջ - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 153-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԽՈՐԴԱՆՈՑԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ, 35-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության 19.11.2019թ. 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշումով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 20.04.2023թ N 97-Ա որոշումը, սեփականության իրավունքի N 18052023-06-0065 վկայականը, վճարման անդորրագրերը և հաշվի առնելով որ, Արարատ Սարուխանյանը ընդունել է խորդանոցը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը և վճարել է օրինականացման համար սահմանված վճարները՝

Որոշում եմ.

1. Թումանյան համայնք,ք. Թումանյան,Կենտրոնական փողոց, 5/9 հասցեում գտնվող, համայնքի ղեկավարի 20.04.2023թ N 97-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված 5,16 քմ արտաքին մակերեսով (3,5 քմ ներքին մակերեսով) խորդանոցը՝ 2765,76 (երկու հազար յոթ հարյուր վաթսունհինգ դրամ յոթանասունվեց լումա) ՀՀ դրամ արժեքով և սպասարկման համար զբաղեցրած 0.00364 հա մակերեսով հողամասը՝ 5165,16 (հինգ հազար հարյուր վաթսունհինգ դրամ տասնվեց լումա) ՀՀ դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով օտարել Արարատ Վանյայի Սարուխանյանին:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23 թ. հունիսի 06
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 154-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ,43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ, 35-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության 19.11.2019թ. 225-Ն օրենքով,Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշումով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 19.04.2023թ N 92-Ա որոշումը, սեփականության իրավունքի N 11052023-06-0061 վկայականը,վճարման անդորրագրերը և հաշվի առնելով որ, Արարատ Վանյայի Սարուխանյանը ընդունել է ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը և վճարել է օրինականացման համար սահմանված վճարները՝

Որոշում եմ.

1. Թումանյան համայնք,ք. Թումանյան, 2-րդ փողոց, 6/29 հասցեում գտնվող, համայնքի ղեկավարի 19.04.2023թ N 92-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 16,5 քմ արտաքին մակերեսով (13,7քմ ներքին մակերեսով) ավտոտնակը՝ 8844,0 (ութ հազար ութ հարյուր քառասունչորս) ՀՀ դրամ արժեքով և սպասարկման համար զբաղեցրած 0.00165 հա մակերեսով հողամասը՝ 2341,35 (երկու հազար երեք հարյուր քառասունմեկ դրամ երեսունհինգ լումա) ՀՀ դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով օտարել Արարատ Վանյայի Սարուխանյանին:
2.Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23թ. հունիսի 06
ք.Թումանյան